

**ՏԻՐԱՆ ԱԶԱՏԻ  
ԼՕՔՍԱԳՈՋՅԱՆ**

**Երգիչ լրագրող,  
թուրքագետ**

**Կ**ոմիտաս վարդապետի ներդրումը հայկական երաժշտության ասպարեզում բոլորիս համար անժխտելի փաստ է: Այնուհանդերձ, նրա վաստակը իրական չափանիշներով իր արժանի փեղը դեռևս չի գրել: Գլխավոր պատճառն այն ցավալի իրողությունն է, որ երաժշտագիտական շրջանակները մինչև այժմ թերացած են արժանին հարուցելու նրա գործունեությանը: Այո, շատ է ասվել ու գրվել նրա, գուցե և այնքան շատ, որքան ոչ մի ուրիշ հայ երաժշտի մասին: Հայրենիքում և Սփյուռքում նրա մասին մեծ-մեծ ճաներ ասողները արդյո՞ք ճանաչում են Կոմի-

տաս մյուս՝ վերը նշված ժողովուրդների երաժշտության հետ և ցույց տվեց նրանց տարբերությունը հայկականի համեմատ:

Նրա այլազգի երաժշտության հետ ունեցած իր հարաբերությունների մեզ հասած «ամենածավալուն» արտահայտությունները երեքն են՝ ա)Քրդական երաժշտություն, որը քաղկացած է իր 1903թ-ին Սանկյու-Պետերբուրգում հրատարակված քրդական ժողովրդական երգերի ժողովածուից և Կոմիտասյան արխիվում\* գրելվող մի քանի բեկորներից, բ)Նրա հավաքած թրքական «շարկը»ների և «բյուրբյուր»ների ժողովածուներ և բազմաթիվ տարբեր երգերի գրանցումներ, որոնք նույնպես գրելվում են Կոմիտասի արխիվում, կան նաև իր հորինած թրքական երգերը, միաձայն և բազմաձայն: գ)Այս հոդվածի նպատակը հանդիսացող գերմանական երաժշտության արեղծագործությունները, բոլորն էլ իր հորինումները, մենք կիսում ենք երաժշտագետ Ռ.Աբալյանի այն եզրակացությունը, որ այս հորի-

ԿԵՐԼԵՏԻՍԵՆԻ

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

**Գերմանիայում ուսումնառության տարիներին գրած  
ստեղծագործությունները**

րասի իսկական վաստակն ու արժեքը: Ինչպե՞ս է ճանաչում Կոմիտասին հասարակությունը և, ինչու՞ չէ, նաև երաժշտական ասպարեզի արվեստագետների մեծ մասը: Հայկական հոգևոր և ժողովրդական երգերը կորստից փրկող, դրանք մշակող, բազմաձայնող մի քանահավաք, որի մասին գիտենք նաև, որ մի քանի տարի Գերմանիայում էր սովորել: Մեզ դեռևս պակասում են Կոմիտասի կյանքի ու գործունեության լիակատար տարեգրությունը, նրա արեղծագործական ուղու վերլուծությունը, որի մեջ պետք է ներառվեն ոչ միայն իր հոգևոր ու ժողովրդական մշակումները, այլ նաև իր արխիվի հաշվառումն ու հրատարակումը (չմշակված նյութերի) որպես առաջին անգամ: Ամփոփենք, կատարվածներից անհամեմատելի շատ են անելիքները:

Կոմիտասը փրկիչն էր հայ երաժշտության: Նա հայ երաժշտության առաջին տեսաբանն էր: Կոմիտասը ասպարեզ եկավ մի ժամանակաշրջանում, երբ ոչ միայն այլազգիներն էին անրեղյակ հայկական երաժշտության մասին, այլ անգամ հայերն իրենք չգիտեին թե «հայր երգ ունի, երաժշտություն ունի»: Բայց նա շահմանափակվեց միայն հայկականով, այլ զբաղվեց նաև թուրք, վրացի, արաբ, պարսիկ և բուրդ ազգային երաժշտության ուսումնասիրությամբ: Հրատարակեց քրդական ժողովրդական երգերի աշխարհում առաջին ժողովածուն: Եվրոպայում ունեցած քանահոսություններում նա ծանոթացրեց ոչ միայն հայկական, այլ նաև արևել-

նումները ստեղծվել էին Կոմիտասի Գերմանիայում ուսանելիս 1896թ-ից 1899թ-ի միջև ընկած ժամանակաշրջանում, բայց համակարծիք չենք իր մյուս հետևորդները, թե դրանք ամբողջապես պիրի վարժություններ, հանձնարարություններ կամ «վրային աշխատանքներ» լինեին: Նրանց մեջ կան այնպիսի գործեր, որոնք դուրս են գալիս այդ սահմաններից իրենց մակարդակով, չևով, և ինչու՞ ոչ, նաև ծավալով, ու փարանջարվում են մյուսներից: Կոմիտասի գերմաներեն արեղծագործությունների մասին մի քանի անգամ անդրադարձել է Ռ.Աբալյանը, իր «Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում» (1. էջ 48-59) և «Komitas, An den Wassern zu Babel» (2. էջ 35-39) հոդվածներում ու նաև իր «Կոմիտաս - երկերի ժողովածու» հավորներում: Ուզում ենք անդրադառնալ նաև Ռ.Աբալյանի «Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում» (1.) հոդվածի մի քանի կետերին: Այսպես նշվում է, թե գերմանական ոճով Կոմիտասի գրած արեղծագործությունները քաղկացած են. ա)յոթ մեներգից; բ)երեք խմբերգից; գ)սաղմուսից; դ)«Nachtlied» («Գիշերային երգ») մեներգից; ե)«Re-miniscenzen» (հուշեր) լարային նվագախմբի պիեսից; զ)«Waldnacht» (անտառային գիշեր) սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մի աշխարհությունից; է)«Trauermarsch» («Սգո քայլերգ») դաշնամուրային արեղծագործությունից; ը)երկու դաշնամուրի «Երգ»ից և թ)մի անավարտ պիեսից՝ երկու թավջութակի և դաշնամուրի համար: Ըստ վերոհիշ-

Երաժշտական հասցես 4(36)2009

\* Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (Չարենցի անվ. ԳԱԹ):

յալ ցանկի Կոմիտասի գերմանական սրեղծագործությունները բաղկացած են 18 կորորից, որը ամենևին չի համապատասխանում իրական քանակի հետ:

Հողվածագիրը նշել է նաև թվականներ, որոնց մեծ մասը Կոմիտասի շեռագրերում չկան և ավելացվել են հողվածագրի կողմից: Ծիշոր է «Nachtlied»-ի թվականը, «Դաշնամուրի երգեր»-իև և մասամբ նաև «Reminiscenzen»-իև: Վերջինիս թվականը վերցված է նույնանուն սրեղծագործության դաշնամուրային տարբերակից, որը սակայն հողվածում չի նշվում: Այսուհանդերձ, դժբախտաբար հողվածում չի նշվում նաև, թե հողվածագիրը ի՞նչ փաստերի կամ հաշվարկների հիման վրա է հանգել այդ եզրակացություններին, որոնք մի գուցե մեզ էլ կարող էին համոզել ընդունելու մի շարք որոշակի տարբերակ, ինչպիսիք նշված են «Waldnacht»-ի և «Trauermarsch»-ի դեպքում: Անտարբեր չանցնելով հանդերձ սույն նյութի հետ առնչվող հեղինակավոր մի հողվածի կողքով, այնուամենայնիվ չենք ուզում ավելի խորանալ մանրամասնությունների մեջ, այլ հպանցիկ մի ակնարկ նետելով ուզում ենք այստեղ մեր պրպարումների արդյունքները ներկայացնել, եզրակացությունների ու համեմատությունների իրավունքը թողնելով երաժշտագետ ու երաժշտասեր ընթերցողին:

Կոմիտասյան արիփվում պահվող շեռագրերից մեզ հաջողվեց ի մի բերել նրա գերմաներեն սրեղծագործությունները: Հավաքվեց Կոմիտասյան վաստակի 38 արտագրումներ՝ բոլորն էլ անստվոր մեր «Կոմիտասյան» ընկալման չափանիշներին: Կան միևնույն եղանակի տարբեր գրառումներ, կամ նույն երաժշտության տարբեր բեկորներ, որոնք մենք դուրս ենք թողել այս վերոնշյալ թվից, չափից դուրս անկարար լինելու պարճառով: Կան նաև անավարտ և ոչ լրիվ դաշնավորված սրեղծագործություններ, որոնք մենք ընդունել ենք թեև ոչ որպես ավարտուն աշխատություններ, բայց այնուամենայնիվ կայացած մրահագումներ ու մրցրել ենք սույն հաշվի մեջ:

Կոմիտասի գերմաներեն սրեղծագործությունները բաժանվում են հինգ մասի: ա) մեներգեր; բ) խմբերգեր; գ) դաշնամուրային գործեր; դ) լարային քառյակի համար գրված աշխատանքներ և ե) մի սրեղծագործություն նվագախմբի համար:

Կոմիտասը իր մեներգերի ու խմբերգերի համար օգտագործել է 7 գերմանացի բանաստեղծի երկեր: Մեկը՝ Յոհանն Վոլֆգանգ ֆոն Գյոթեն (Johann Wolfgang von Goethe 1749-1832) է: Յ. Գյոթեն ընթունվում է որպես անգերագանցելի մեծություն ամբողջ գերմանական պոեզիայում, որին հավասարվելու պարիվը վիճակվում է միայն երկրորդ մեծության՝ Ֆ. Շիլլերին (Friedrich Schiller), երկուսն էլ պարկանում են գերմանացի բանաստեղծների դասականների շարքին: Կոմիտասը չայնավորել է նաև վիպապաշտական (romantik) ուղղության

պարկանող մանաչված գերմանացի այնպիսի բանաստեղծների գործեր, ինչպիսիք են Ն. Լենաուն (Nikolaus Lenau 1802-1850), Օ. Ռոքեթը (Otto Roquette 1824-1896), Ջ. Շտուրմը (Julius Sturm 1816-1896) և Լ. Ուլանդը (Ludwig Uhland 1787-1862): Կոմիտասի սրեղծագործություններում րեղ են գրել նաև իրապաշտների (realist) գործերը, օրինակ Թ. Շտուրմը՝ (Theodor Storm 1817-1888), որի մի բանաստեղծությունը նա օգտագործել է: Միակ կին բանաստեղծուհին, որից նա օգրվել է, Յ. Ամբրոզիուսն (Johanna Ambrosius 1854-1939) է: Այստեղից կարելի է հետևել, որ Կոմիտասը օգտագործել է տարբեր ուղղությունների պարկանող գերմանացի բանաստեղծների սրեղծագործությունները: Մի բան, որ վերը հիշարակված բոլոր վեց բանաստեղծներին հատուկ է, այն է՝ որ բոլորն էլ ապրել և սրեղծագործել են ամբողջովին կամ մասամբ 19-րդ դարում, բայց բացառությամբ Ամբրոզիուսի, ոչ մեկն արդեն չի եղել Կոմիտասի ժամանակակիցը նրա Գերմանիայում ուսանելու ժամանակաշրջանում:

Մեներգերի թիվը տասն են, որոնցից մեկը՝ «Nachtlied» (1. Կ. Ֆ. նո. 532) («Գիշերերգ») կրկնվում է երեք անգամ: ա) գերմաներեն բառերով և ինչպես բոլոր մյուս մեներգերի նման դաշնամուրի նվագակցությամբ, գրված է «դո փոքրալար»\* (do minor, do m) չայնակայքի (tonality) մեջ, ընթացքը (tempo) նշված է «Andante Sostenuto», ամանակն (չափը, metr) է 3/4, իսկ մեներգի բաժնի դեմ արձանագրված է «Mezzosopran-Bariton», բաղկացած է 28 հարածներից (տակտ, mesure); բ) նույնպես դաշնամուրի նվագակցությամբ, բայց այս անգամ ռուսերեն բառերով («Горные вершины», ԳԱԹ; Կ. Ֆ. նո. 510): Գրված է «մի կիսավար փոքրալար» (mi bemol minor) չայնակայքի մեջ, ընթացքը ինչպես առաջին տարբերակի մոտ «Andante Sostenuto» է, ամանակը նույնպես 3/4, բայց մեներգի բաժնի դեմ այստեղ գրված է\*\* «Sop.-Ten» (Sopran-Tenor), բաղկացած նույնպես 28 հարածներից; գ) երգ՝ առանց դաշնամուրի նվագակցության, գերմաներեն բառերով (ԳԱԹ; Կ. Ֆ. նո. 710): Վերջին տարբերակը գրված է ք) տարբերակի նման «մի կիսավար փոքրալար» (mi bemol minor) չայնակայքի մեջ, ընթացքը ինչպես մյուս երկու դեպքում «Andante Sostenuto», ամանակը 3/4, բայց ունի 21 հարած նվագակցության բաժնի բացակայության պարճառով: Ամբողջ 38 սրեղծագործություններից թվականացված են միայն հինգը, որոնցից մեկն էլ «Nachtlied»-ն է, նա կրում է 12.1.1899 թվականը: Այս երգի բառերը պարկանում են Մ. Լենունդերովին, որը այս փոքրիկ բանաստեղծությունը բարգմանել է Գյոթեից, Կոմիտասը Լենունդերովի բառերը վերադրել է Գյոթեից, Կոմիտասը Լենունդերովի բառերը վերադրել է գերմաներենի (ինչպես նկատել էր արդեն Ռ. Աթայանը) (1. էջ 52), որոնց հիման վրա գրել է երգը և արձանագրել երկու անգամ, մեկը գերմաներեն, իսկ մյուսը ռուսերեն բառերով:

Երկրորդ մեներգի անվանումն է «Glückliche

երաժշտական շԱԳԱՍՏԱՆ 4(35)2009

\* Փոքրալար-մինոր տերմին օգտագործում ենք տողերիս հեղինակը, ինչպես նաև երաժշտագետ Հ. Ավագյանը ըստ՝ Կոմիտասի:  
 \*\* Նշագրումն ըստ Կոմիտասի:

Fahrt» («Երջանիկ ճանապարհորդություն» ԳԱԹ: Կ.Ֆ. նո.529): Բանասարկեղծությունը դարձյալ Գյոթեինն է, անթվակիր, սկսում է «Մի մեծալար» (Mi Major) շայնակայքով, զարդուղություններ (modulation) կատարելով վերջանում է դարձյալ «մի մեծալար»ով, ընթացքը նշված է «Andante», ամսակար 4/4, ունի 19 հարած:

Երրորդի խոսքերը նույնպես պարկանում են Գյոթեինն, «Meeresstille» («Ծովային լռություն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.533): Նույնպես անթվակիր: Չայնակայքը դո փոքրալար (do minor) է: Նշված է ընթացքը՝ «Andante Sostenuto», իսկ վերջնամասում ավելացված է Calando: Ամսակար 4/4 է և գրված 20 հարածի վրա:

Չորրորդ մեներգը հեղափոխի է նրանով, որ բոլոր այս փոքրիկ սրեղծագործությունների շարքում աչքի է ընկնում լայնածավալությանը, ի միջի այլոց երգի երկարությունը պայմանավորված չէ բանասարկեղծության րևների բանակով, որպես սովորաբար կրկնվում է նույն եղանակը, այլ այստեղ ընկրված է մի երկարաշունչ բանասարկեղծություն Լենուսից, որպես գրավոր երկի հետ գուզընթաց զարգանում է նաև եղանակը, որը հասնում է իր գագաթնակետին սրեղծագործության ավարտին: Մեներգի անունն է «Sturmesmythe» («Փոթորկի առասպելը», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.546) ու բվագրված է 30.7.1897, այսինքն Կոմիտասի Գերմանիա գալուց համարյա մեկ տարի անց: Այս երգը սկսում է մի փոքրալար (mi minor) շայնակայքով, անցնում լա փոքրալարի (la minor) և ավարտվում սկսած շայնակայքով: Ընթացքը «Largetto» է նշված: Ամսակար փոփոխական է: Մինչև 10-րդ հարածը 4/4 ընթանալուց հետո անցնում է 6/8-ի ու հինգ անգամ ևս 4/4-ի ու 6/8-ի վերածվելով ավարտվում է 4/4-ով: Ունի 120 ամսակար րեողություն:

5-րդ երգն է «Nebel» («Մառախուղ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.547), որը պարկանում է նույնպես Լենուսի գրչին, անթվակիր է: Այս երգը գրված է սի կիսալար փոքրալար (si bemol minor) շայնակայքի մեջ: Ընթացքը նշված է՝ «Langsam» (գերմ.՝ «Դանդաղ»), իսկ երկրորդ մասի սկզբին պահանջվում է «etwas bewegter» (գերմ.՝ «Մի փոքր աշխուժանալ»): Ամսակար 3/4 է: Ունի 32 հարած:

6-րդ սրեղծագործությունը այս շարքից կոչվում է «Frühlingsruhe» («Գարնանային հանգիստ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.547), բանասարկեղծն է Լուրվիկ Ուլանսի: Սա ևս անթվակիր է: Սկսում է սի կիսալար փոքրալար (si bemol minor) շայնակայքով ու վերջնամասում անցնելով սի փոքրալարի (si minor) ավարտվում է նորից սի կիսալար փոքրալարով: Ընթացքը «Adagio» է նշված: Ամսակարն է 4/4: Հարածների բանակությունը 17 է:

7-րդ երգը գրված է «Komm, o Nacht» («Արի, ով գիշեր», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.549) բանասարկեղծության բաների վրա, որը պարկանում է Շյոբերինն, քվակար չի նշված: Այս երգի ընթացքում նույնպես փոփոխվում է շայնակայքը, այն սկսում է սի կիսալար փոքրալարով (si bemol minor), անցնում է կատարյալ (La Major) ու վերջնամասում վերադառնում սկսած շայնակայքի: Ընթացքը՝ «Andante sostenuto»: Ամսակարն է 4/4: Ունի 53 հարած: Մեներգի երգաբաժնում արձանագրված է «Contr-Alt»:

8-րդ Ծրոյրի բանասարկեղծությունն է և կոչվում է «April» («Ապրիլ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 549): Սա ևս անթվակիր է: Չայնակայքն է դո փոքրալար (do minor): Ընթացքը՝ «Langsam» (գերմ.՝ «Դանդաղ»): Ամսակար 4/4 է: Հարածների թիվը 19: Մեներգի բաժնի մոյր գրված է «Bariton»:

9-րդ երգը պարկանում է այն սակավաթիվ երգերին, որոնց քվակարն նշված է: Սա կրում է 12/24.3.1897 քվակար, վերնագիրն է «Du fragst?» («Հարցնում ես», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 537), բաները պարկանում են բանասարկեղծուի Ամբրոզիուսին: Երգի շայնակայքը սի փոքրալար (si minor) է: Ընթացքի նշումը՝ «Commodo»: Ամսակարն է 3/4: Երգը զարգանում է 40 հարածի մեջ: Մեներգի երգաբաժնում նշված է «Alt»:

Վերջին մեներգը, քվով տասներորդը «Lob des Frühlings» («Գարնան գուզ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 500) երգն է: Սա նույնպես անթվակիր է, բանասարկեղծն է Լ.Ուլանսի: Այս երգի մոյր ոչ նշված էր բանասարկեղծի անունը, ոչ էլ վերնագիր ուներ: Թե՛ բանասարկեղծի և թե՛ երգի անունը ի հայտ են եկել մեր ուսումնասիրությունների արդյունքում: Նշված չէ նաև ընթացքը: Չայնակայքը մի կիսալար մեծալար (Mi bemol Major) է, իսկ ամսակար 9/8: Ունի 17 հարած: Այսպիսով ավարտվում է Կոմիտասի գերմանական ոճով մեներգերի շարքը:

Խմբերգերը չորսն են: Բոլորն էլ գրված են քառաչայն երկսեռ երգչախմբի համար: Միայն մեկի՝ «Առ գետն բարեկամացից»\* սաղմոսի դեպքում ավելացած են նաև մեներգային բաժիններ: Առաջին խմբերգը կոչվում է «Neuer Frühling» («Նոր գարուն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 502), բանասարկեղծությունը գրել է Ռոբերտին: Սա մի փոքր սրեղծագործություն է, ընդամենը 24 հարածների մեջ ամփոփված: Չայնակայքը Ռե մեծալար (Re Major) է: Գրված է քառաչայն երկսեռ երգչախմբի համար: Ընթացքը րրված է՝ «Allegro non troppo»: Ամսակար 4/4 է:

2-րդի խոսքերը գրել է Գյոթեինն, վերնագրված է «Menschengefühl» («Մարդկային զգացմունք», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 545): Այս խմբերգը նույնպես մի փոքրիկ սրեղծագործություն է, գրված ընդամենը 20 հարածների մեջ: Չայնակայքը փոփոխվում է հիմնականում Ռե կիսալար մեծալարի (Re bemol Major) ու Մի մեծալարի (Mi Major) միջև: Ընթացքը «Adagio» է նշված, իսկ ամսակար 4/4: Սա նույնպես քառաչայն երկսեռ երգչախմբի համար է գրված:


3-րդը «Lenz» («Աշուն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 547) է, հեղինակն է Լենուսն: Այստեղ դարձյալ մի փոքր երկ է, ամփոփված 30 հարածների մեջ: Ամբողջ սրեղծագործությունը ընդանում է մի մեծալար (Mi Major) շայնակայքի մեջ: Ընթացքը՝ «Allegro»: Ամսակարն է 3/4: Գրված է քառաչայն երկսեռ երգչախմբի համար:

\* Այս մասին տե՛ս նաև ավելի մանրամասն (3. էջ 35-39):

Երաժշտական հասցես 4(36)2009



\* Բեռլին, 1896թ.  
Берлин, 1896.  
Berlin in 1896.



\* Սպիրիդոն Մելիքյանը և Կոմիտասը Բեռլինում, 1907թ.  
Спиридон Меликян и Комитас, Берлин, 1907.  
Spiridon Melikyan and Komitas in Berlin, 1907.

երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 4(35)2009

Չորրորդ խմբերգը, որը վերջինն է խմբերգերի շարքից, երաժշտագետ Ռ.Աթայանի կողմից բազմիցս անդրադարձված սաղմոսն է «An den Wassern zu Babel» («Առ գետն քարելացվոց», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.519): Բառերը վերցված են Դավթի սաղմոսներից, թվով 137-րդը\*: Այս սրեղծագործությունը գրված է նույնպես քառաչայն երկսեռ երգչախմբի համար, բայց ծավալային ու կառուցվածքային առումով էական տարբերություններ ունի: Մյուս խմբերգերից քառապարփի երկար է, ունի 114 հարված: Չայնակայքը սկսվում է Մի մեծալարով (Mi Major), որից զարտուղություններ կատարելով ավարտվում նույն չայնակայքով: Բոլոր խմբերգերը անթվակիր են:

Ինչպես արդեն նշեցինք, Կոմիտասը որևէ մի բանաստեղծի կամ բանաստեղծական ուղղությանը նախապատվություն չի տվել: Բանաստեղծությունները միատեսակ չեն եղել նաև իրենց տրամադրությամբ: Այսպես, կան գվարթ, թախծուր կամ տիտուր երգեր, կան երգեր, որոնք պատմում են զարնան, բնության վերածննդի, ուրախության մասին, կան նաև այնպիսի սրեղծագործություններ, որոնք անդրադառնում են տիտության, մահի ու գերեզմանի:

Դաշնամուրային սրեղծագործությունները 17 են, որոնցից վեցը անավարտ վիճակում: Այստեղ պետք է նշենք նաև, որ այս շարքի մեջ մտցրել ենք բոլոր այն սրեղծագործությունները, որոնք գրված են դաշնամուրային գույգ հնգագծի վրա, չանտեսելով այն հավանականությունը, որ մի շարք սրեղծագործությունների դեպքում կարող ենք գործ ունենալ նաև ուրիշ նվագարանների, լարային քառյակի և անգամ խմբերգային երաժշտության համար գրված եղանակների հետ:

Այս շարքի 1-ին սրեղծագործությունը վերնա-

գիր չունի, նշված է միայն ընթացքը, «Allegro sostenuto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.520): Այս մեկը «Կոմիտաս - երկերի ժողովածու»-ի 6-րդ հատորում Ռ.Աթայանի կողմից ներկայացված է որպես Կոմիտասի ֆոնդի 532 համարի տակ գրվելով և անվերնագիր (ընթացքը «Largo») լարային քառյակի համար գրված սրեղծագործության շարունակություն: Այդ հավանականությունը չժխտելով հանդերձ ցանկանում ենք շեշտել, որ դա այնքան էլ բնորոշ չէ և ընդհանրապես հարցական է, նաև այն կետը, թե Կոմիտասը իրո՞ք դա գրել է լարային քառյակի համար, թե ոչ: Տպավորությունն այն է, որ նա միայն նպատակ է ունեցել դաշնամուրային կամ խմբերգային (ավելի հավանական) այս գրառումը առաջիկայում քառյակի վերածել: Այդ պատճառով էլ մենք այս մեկը ներկայացնում ենք անջարտաբար, չանտեսելով այն հավանականությունը, որ այս երկու գործերը կարող են նաև միմյանց հետ կապված լինել: Էջի ներքևում կա թվագրություն 25.11.1898: Այն ընթանում է ռե միորալար (re minor) չայնակայքի մեջ: Ընթացքը նշված է «Allegro sostenuto», իսկ ամսանակը 12/8: Ընդամենը 8 հարված ունի:

2-րդը վերնագրված է «Reminiscenzen» («Հուշեր») (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.580), թվարկված է 14.6.1898: Այս սրեղծագործությունը Կոմիտասի գրառումներից առավել ավարտուն տեսք ունեցողներից մեկն է: Բոլոր նշումները կանոնավոր արչանագրված են: Ունի 33 հարված: Չայնակայքն է դո կիսվեր փոքրալար (do diese minor): Ընթացքը «Andante», որը երկրորդ մասում վերածվում է «Piu Andante»-ի: Ամսանակը՝ 12/8: Բացի վերը նշված երկու գործերից մնացած դաշնամուրային բոլոր սրեղծագործությունները անթվակիր են:

3-րդ գրառման վերնագիրը «Traum» («Երագ»)՝

\* Ըստ Հայաստանյայց առաքելական եկեղեցու սաղմոսարանի 136-րդը:

(ԳԱԹ: Կ.Ֆ. նո.585) է: Այս սրեղծագործությունը նախորդին հակառակ, չի թողնում այն փրավորությունը, որ ավարտուն լինի: Գրված է 64 հարածի փոփոխության վրա: Չայնակայքը փոփոխվում է 6 անգամ: Սկսելով Ֆա մեծալարից (Fa Major) ու զարդարություն կատարելով վերադառնում է դարձյալ սկզբնական Ֆա մեծալար շայնակայքի: Ընթացքը նույնպես փոփոխական է: Առաջին մասը՝ «Largo», երկրորդ մասում դառնում է «Andantino», վերջին մասում «Molto Andante» իսկ վերջին 4 հարածներն ավարտվում են նույն ընթացքով, ինչպես որ սկսել էր «Largo»: Ամսակայք սկսելով 3/4-ով, երկրորդ մասում դառնում է 4/4 և շարունակվում այսպես մինչև վերջին 4 հարածները, որտեղ վերադառնում է 3/4 ամսակալի ու ավարտվում այդպես:

4-րդը կոչվում է «Nocturno» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.571): Այն ունի նաև իր հայերեն վերնագիրը, արձանագրված Կոմիտաս վրդ.ի կողմից, «Այգաևուազ»: Կա էլի մի հեղափոխություն: «Երաժշտության Կոմիտաս Վարդապետի - Musik von Archimandrit Komidas, Op. 1»: Սա հիրավի բավական հեղափոխություն մի նշում է: Այն առումով, որ Կոմիտասն իր այս դաշնամուրային կտորը ընդունել է որպես առաջինը իր բոլոր սրեղծագործություններից, կամ էլ որպես առաջինը իր գերմաններեն հորինումներից: Այն քվակաևացված չէ, ուստի եզրահանգումները թե որ սրեղծագործություններից առաջ է սրեղծել թե հետո, չենք կարող ճշգրտել: Այն ընթանում է 40 հարածներով, բայց ուշադիր հետևողի համար միանգամից նկատելի է դառնում, որ 26-րդ հարածից հետո պակասում են 12 հարած: Իրապես, բնագիրը քննելուց երևում է պարզապես: Այս հարվածում գոյություն ունի համարյա դարարկ մի էջ, որտեղ գծված են 14 հարածների գծերը, բայց չկան շայնանիշեր, բացի առաջին երկու հարածից: Հավանական է, որ Կոմիտասն այս հարածները ցանկանում էր լրացնել սրեղծագործության առաջին մասի զարդարացված փարբերակով, որի գրանցումը թողել է մշակման կամ մաքրագրման ժամանակ կատարելու համար, բայց այդպես էլ չի կատարվել: «Այգաևուազ»ի շայնակայքը սկսում է մի կիսավար փոքրալարով (mi bemol minor) ու անցնում սոլ կիսավեր փոքրալարի (sol diese minor), ապա վերադառնում սկսած շայնակայքին ու այդպես էլ հասնում մինչև ավարտին: Երաժշտության սկզբում ընթացքը չի նշված: Միայն 27-րդ հարածում կա «Andantino» նշումը:

5-րդ (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) և 6-րդ (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) ավարտուն դաշնամուրային սրեղծագործությունների մոտ գրված է «Էսքիզ»: Ընդունելով հանդերձ որ այս երկուսից առաջինը մի քիչ փարբերվում է մյուսներից իր հայկական շնչով, այնուամենայնիվ որոշեցինք մրցնել այս շարքի մեջ, որպես Կոմիտաս վրդ.ի Գերմանիայում ուսանելու ժամանակաշրջանի աշխատանք: Ունի 18 հարած: Ընթացքը չի նշված: Ամսակայք 2/4 է: Չայնակայքը Ֆա կիսավեր մեծալար (Fa diese Major), որը փոխվում է ռե մեծալարի (Re Major), վերադառնում Ֆա կիսավեր մեծալարի և ավարտում դարձյալ Ռե մեծալարով:

2-րդ «Էսքիզ»ը գրված է 35 հարածի վրա: Ամսակայք 4/4 է: Այս արձանագրության մեջ բազմաթիվ թերություններ են երևում, որոնցից մեկն էլ ըստ երևույթին շայնակայքը ճշրով նշաններն են: Հակառակ, որ ոչ մի կիսավեր կամ կիսավար նշան չկա փողերի սկզբում, որից կարելի է որոշել շայնակայքը, և որի բացակայությունն իր հերթին պետք է նշանակել Դո մեծալար (Do Major) կամ լա փոքրալար (la minor) շայնակայք, մենք հսկված ենք ենթադրելու, որ նշանները պարզապես մոռացված են կամ չեն նշված, քանի որ երաժշտության կառուցվածքը մեզ այդպես է հուշում: Ընթացքի մասին ոչ մի նշում չկա:

7-րդը կոչվում է «Menuetto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.577): Ավարտուն փեսք ունեցող հազվագյուր սրեղծագործություններից է: Գրված է 29 հարածում: Չայնակայքը փոփոխվում է այսպես երեք անգամ: Այն սկսում է դո կիսավար փոքրալարով (do bemol minor), անցնում է ֆա փոքրալարի (fa minor) և ավարտվում Սոլ մեծալարով (Sol Major):

Մնացած չորս ավարտուն դաշնամուրային սրեղծագործությունները վերնագիր չունեն: Այս շարքից առաջինը ընթացքը «Andante» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 588) է: Ամսակայք 4/4: Իսկ շայնակայքը անփոփոխ ոչ փոքրալար (do minor) է: Ունի 22 հարած:

2-րդը «Allegro» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) ընթացք ունի: Ամսակայք 12/8, հետո 6/8, որը փոխվում է դարձյալ 12/8-ի: Չայնակայքն է Մի կիսավար մեծալար (Mi bemol Major), որը փոխվում է Սոլ մեծալարի (Sol Major), հետո Մի մեծալարի (Mi Major) ու զարդարություն կատարելով հասնում է Մի կիսավար մեծալարի (Mi bemol Major) որով և շարունակում է մինչև ավարտը:

3-րդի ընթացքը «Animato» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է նշված: Ամսակայքն է 11/8: Ունի Ֆա մեծալար (Fa Major) շայնակայք: Գրված է ընդամենը 10 հարածում:

4-րդի ընթացքը «Largo» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է: Սա երկարաշունչ սրեղծագործություններից է, ունի 51 հարած: Չայնակայքը առաջին մասում դո կիսավեր փոքրալար (do diese minor) է, որը երկրորդ մասում դառնում է Ֆա կիսավեր մեծալար (Fa diese Major):

Վեց դաշնամուրային գրառում մեզ հասել է, թեքավար փիճակում, պակասում են էջեր: Երեքը անվանում ունեն: Առաջինի անվանումն է «Schwermuth» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.578) («Թսիիծ»), որի շայնակայքն է դո փոքրալար (do minor), հետո փոխվում է Դո մեծալարի (Do Major), իսկ քանի որ անավարտ է ու վերջանում է 28 հարածից, հայրնի չէ, թե ինչպես է այն ավարտվում: Ամսակայք 3/4 է: Ընթացքի նշումն է «Andante sostenuto»:

2-րդը «Trauermarsch» («Սգո քայլերք») (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է կոչվում: Ամեն ինչով կատարյալ փրավորություն թողնող այս սրեղծագործությանը, ափսոս, որ պակասում են էջեր: Չի թվում, որ Կոմիտասն այն անավարտ է թողել: Հավանական պետք է նկատենք, որ էջի շարունակությունը մեզ չի հասել: Սկսում է Մի մեծալար (Mi Major) շայնակայքով, ապա անցնում ֆա կիսավեր փոքրալարի (fa diese

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 4(36)2009

minor), իսկ այնուհետև լա մինոր (la minor), որից զարրոտդի կարարելով հասնում է դո մինոր (do minor): Վերջին հարածի ավարտին երևում է, թե չայնակայքը նորից է փոխվում ու սրանում է 4 կիսվեր, բայց քանի որ այլևս չկան չայնակներ, ի վիճակի չենք ճշտելու, թե հավանական Մի մեծալարի (Mi Major) է վերածվում, թե նրա համապատասխան դո կիսվեր փոքրալարի (do diese minor): Այն ունի 38 հարած, իսկ ամանակն է 12/8:

3-րդը կոչվում է «Երագուն» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Գրված է Սոլ մեծալար (Sol Major) չայնակայքով: Ընթացքը նշված է «Allegro»: Ամանակն է 6/8: Ունի 27 հարած:

4-րդը վերնագրված է «Էսրիզ» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Այս գրառումն ունի բազմաթիվ թերություններ: Թերություններն այնքան աղաղակող են, որ կասկած է առաջանում այս գրառման Կոմիտասի պարկանելիության մասին: Արձանագրված է 16 հարած: Ամանակը սկզբում 4/4 է, որը սակայն 3 հարած հետո փոխվում է 2/4-ի, իսկ 2 հարած հետո էլի 4/4-ի: Ընթացքը չի նշված:

Մյուս երկուսը ընդհանրապես վերնագիր չունեն: Անվերնագիրներից առաջինի ընթացքն է «Allegretto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Այս մեկը բավական երկարաշունչ, բայց կիսար թողնված մի աշխարհն է: Հերարքերն այն է, որ այս եղանակը Կոմիտասը հետագայում օգտագործել է, թուրք բանաստեղծ ու «Թուրքականության» գաղափարախոսության պարագլուխներից Մեհմետ Էմինի «Էյ իյնեն փիք» բանաստեղծությունը չայնակավորելիս: (Կրես` մեր հեղինակած հոդվածները) (5.) Այն սկսում է Մի մեծալար (Mi Major) չայնակայքով, անցնում սոլ կիսվեր փոքրալարի (sol diese minor), որից հետո դառնում է մի փոքրալար (mi minor), այնուհետև դո կիսվեր փոքրալար (do diese minor), այսպես բավական շարունակելուց հետո էլ ընդհարվում է գրառումը: Ընթացքն է «Allegretto»: Ամանակը 5/4:

2-րդ անվերնագիրը և ամենանվերջին դաշնամուրային սրեղծագործությունը «Andante» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.570) ընթացք ունի: Ամանակը 3/4 է: Չայնակայքը դո փոքրալար: Հարածները` 20 են:

Լարային քառյակները թվով վեցն են: Երկուսը անավարտ: Ավարտած հորիզոններից առաջինի վերնագիրն է «Reminiscenzen» («Հուշեր», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.528): Սա` նույնանուն դաշնամուրային սրեղծագործության մի փարբերակն է, գրված լարային քառյակի համար: Ինչպես վերևում արդեն նշվեց, այս փարբերակը թվարկում չունի, թվարկված է միայն դաշնամուրային փարբերակը: Այն գրված է 33 հարածում: Այսինքն դաշնամուրային փարբերակի չափ: Ընթացքը «Andantino»: Ամանակը 12/8 է: Չայնակայքը անփոփոխ, դո կիսվեր փոքրալար (do diese minor) է:

2-րդ լարային քառյակի համար կազմված սրեղծագործությունը վերնագրված է «Menuetto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.548), նույնպես անթվակիր: Ամանակը 3/4 է: Ընթացքը նշված է «Allegro»: Մենուետը սկսում է Ռե մեծալարով (Re Major), բայց ավարտվում է համապատասխան սի փոքրալարով (si

minor):

Մնացած ավարտուն լարային քառյակի սրեղծագործություններից երկուսը վերնագիր չունեն: Այս երկուսից առաջինի ընթացքը վերևում նշված է «Largo» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.520): Այն գրված է ֆա փոքրալար չայնակայքով: Ունի 4/4 ամանակ: Հարածները 11-ն են: Սա արձանագրված է դաշնամուրային սրեղծագործությունների շարքում նշված անվերնագիր գրանցումներից «Allegro sostenuto» ընթացքն ունեցող գրառման հետ նույն էջի վրա: Մենք նշել էինք թե «Allegro sostenuto»-ն թվարկված է: Այսպես պետք է հիշարակենք, որ էջի վերևի մասում գրանցված է «Largo»-ն, իսկ ներքևում «Allegro sostenuto»-ն, և քանի որ թվականը արձանագրված է այս երկրորդի ներքևում, հասարակ չէ` թվականը պարկանում է միայն այդ մի աշխարհայինը, թե նկարի է ունեցել ամբողջ էջի գրվածքը, այսինքն նաև «Largo»-ն: Քանի որ այս պարագան անորոշ է, չուղեցիկը կամայական մի ենթադրությամբ լուծված համարել այս հարցը և նախընտրելով եզրակացության չհանգել, մարմնակնշիջելով երկու հավանականությունները:

Վերջին ավարտուն սրեղծագործությունը ոչ վերնագիր ունի, ոչ էլ նշված է իր ընթացքը (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.543): Այս աշխարհայինի մասին թանգարանի մարյանում արձանագրված է «սկիզբը չկա»: Մենք պարզեցինք, որ այս նշումը ամենևին էլ չի համապատասխանում իրականությանը: Ճշտելով երաժշտության հերթականությունը, մեզ հաջողվեց դասավորել էջերը, որից հետո ի հայտ եկավ այս սրեղծագործությունն ամբողջովին, իր սկիզբով ու ավարտով հանդերձ: Այս նյութը ևս թվական չունի: Այն գրված է 45 հարածում: Ամանակը 4/4 է, որը չի փոփոխվում մինչև վերջ: Գրան հակառակ չայնակայքը սկսում է Մի մեծալարով (Mi Major) ու փոխվում մի փոքրալարի (mi minor):

Ինչպես վերը նշվեց, լարային քառյակների սրեղծագործությունների մեջ կան նաև երկու անավարտ գրառումներ, որոնք գրվում են Կոմիտասի ֆոնդի 1530 և 535 համարների փակ: Երկուսն էլ անվերնագիր են: Համար 1530 գրառման սկզբում նշված է ընթացքը «Andante»: Արձանագրության մի շարք առանձնահատկություններից դարձելով, հարակորեն կարելի է ասել, որ 1530 համարն ունի սկիզբ, բայց չունի վերջնամաս, նույնքան հարակարող ենք նաև ճշտել, որ N 535 գրառումը հակառակ առաջինի, սկիզբ չունի, բայց ունի վերջավորություն: Երկու գրառումներն էլ ունեն 6/8 կշռոյթ և երկուսն էլ գրված են «Ռե մեծալար» (Re Major, Re M) չայնակայքի (tonality) մեջ: Առաջինը ունի 16 հարած, իսկ վերջինս 25: Դարձելով այս և նման փոխանակներից, հանգեցինք այն եզրակացության, թե այս երկու գրառումները պարկանում են միևնույն սրեղծագործությանը, ընդ որում, N 535 գրառումը պարկ N 1530-ի շարունակությունը լինի, չի բացառվում նաև, որ մի ուրիշ միջանկյալ մաս ևս գոյություն է ունեցել, որը մեզ չի հասել, բայց դա ամենևին էլ պարտադիր չէ` 535-ը կարող է նաև 1530-ի ուղղակի շարունակությունը լինել:

Այսպիսով, հասնում ենք Կոմիտասի գերմաներեն սրեղծագործությունների 38-րդին և վերջինին: Սա սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մի փոքր սրեղծագործություն է, որը գրելովում է Կոմիտասի ֆոնդի 551 համարի տակ: Այս կտորը Կոմիտասը վերնագրել է «Waldnacht» («Անտառային գիշեր», Գ.ԱԹ. Կ.Ֆ. նո.551): Կա նաև Կոմիտասի գրառած հայերեն անվանումը, որը սակայն կոչվում է «Լեռնային գիշեր»: Թե ինչ պատճառով է առաջացել այդ փոփոխությունը, ոչ մի փայլ չունենք մեկնաբանելու համար, իսկ անհիմն ենթադրություններով զբաղվել չենք ցանկանում, ուստի այն մնում է որպես առեղծված, ամեն դեպքում չենք կարծում, որ այդ փոփոխությունը առաջացած լինի գերմաներենի վատ իմացության պատճառով, կարող է նաև մի շարք հասարակ շփոթումների արդյունք լինել: Իսկ եթե դա թարգմանության շփոթ չէ, կարող է նաև կապված լինել սրեղծագործական որևէ մի խնդրի հետ, որը մեզ այժմ զուրկություն է: Վերնագրից անմիջապես ներքևում գրված է «նվագարանների համար», իսկ ընթացքը «Largo»: Ամսակար 4/4 է, որը հեղափոխում փոխվում է 6/8-ի, հետո դարձյալ 4/4-ի վերադառնում և այդպես էլ ավարտվում: Գրված է 77 հարածում:

Այսպիսով, կարելի էր ավարտել Կոմիտասի «գերմաներեն սրեղծագործություններ»ը: Սակայն այնուամենայնիվ չենք կարող զանց առնել մի ուրիշ աշխատանք, որը թեև չի մտնում «գերմաներեն սրեղծագործություն» հասկացողության մեջ, բայց մեր կարծիքով չի կարելի նաև ամբողջովին փարսեցարել դրանից: Կոմիտասի ֆոնդի համար 1648-ի տակ արձանագրված են տասներեք հայկական հոգևոր երգեր, բազմաշայնած և գերմաներենի թարգմանված: Վերնագրված է «Armenische Kirchengesänge von Archimandrit Komitas Keworikian Berlin 15/9» (Հայկական եկեղեցական երգեր Կոմիտաս Վարդապետ Գևորգյանից, Բեռլին 15/9)\*: Դժբախտաբար այս փայլաներից չի երևում գրառման փարսեթիվը, բայց ըստ երևույթին դժվար չէ մուտավոր փարսեթիվը պարզել, քանի որ մի գորավոր փաստ ունենք այս դեպքում: Կարապետ Կոստանյանի դիվանի 1093 ֆոնդային համարի տակ կա Կոմիտասի մի նամակը, հասցեագրված Գևորգյան ձեռնարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին: Նամակը քվագրված է «26/14 մայիս 1897»: Մեջբերում ենք այս նամակում տեղ գրած այն խոսքերը, որոնք այս դեպքում վավերագրական արժեք ունեն մեզ համար: «Մեր հոգևոր երգերից մի քանի կտոր պատրաստել ենք քառաշայն, վեցշայն և ութն շայն. ուսուցչապետ առաջարկեց երգել տալ. պատրաստում ենք մի քանիսն էլ, ապա երգել պետք է տալ ինքը ուսուցչապետ մի որևէ եկեղեցում կամ Singakademie-ում (Երաժշտական սկադեմիա), իբրև հոգևոր համերգ: Մանրամասնությունն ապա կգրենք, երբ յաջողութեամբ գործի անցնենք»: Մեր խորին համոզմամբ խոսքը վերաբերում է վերոհիշյալ



Բեռլին, 1896թ.  
Берлин, 1896.  
Berlin, 1896.



Երևան, 1901թ.  
Ереван, 1901.  
Yerevan 1901.

հոգևոր երգերին\*\*, մանավանդ որ նրանք են «մեր հոգևոր երգեր»ը և քանի որ այս նամակը գրված է 1897-ի մայիսին, իսկ 1648 ֆոնդային համարով գրառման մեջ նշված է սեպտեմբեր ամիսը, ինքնուրույն հասկանալի է, որ «15/9» քվակալը վերաբերում է կամ 1896-ին կամ էլ 1897-ին: Վերը նշվածից երևում է, որ Կոմիտասը 1897-ի մայիսին դեռ «մի քանի կտոր» էր գրել ու պատրաստում էր «մի քանիսն էլ»: 1648 ֆոնդային համարով նյութը գրված է քանաքով, շար մաքուր, իհարկե կան հատուկ նշաններ, բայց դա ըստ Կոմիտասի աշխատանքի չափանիշներով, ոչինչ են, այլ կերպ ասած, այս նյութը մաքրագրված մի փարսեթակ է: Հարցը այս տեսանկյունից դիտելով, պատճառ ունենք որոնելու այս երգերի սևագիրը, որոնց սակայն չենք հանդիպել Կոմիտասի արխիվում գրելվող նյութերի մեջ: Անպատասխան է մնում այն հարցը, թե ո՞ր սեպտեմբեր ամիս մասին է խոսքը: Մեջբերենք ևս մի նամակ Կոմիտասից, ուղղված Կարապետ Կոստանյանին, որը մեր կարծիքով, դարձյալ այս հար-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)2009

\* Այս նյութի մասին առաջին անգամ անդրադարձել է երաժշտագետ Ն. Թահմիզյանը (5.):  
\*\* Նույն միտքն է արտահայտում նաև Ն. Թահմիզյանը իր վերոհիշյալ հոդվածում (5.):

ցի հետք է առնչվում: Չարենցի անվան ԳԱԹ-ում գրելով Կարապետ Կոստանյանի նյութերի 1090 ֆոնդային համարի փակ կա մի նամակ, որը քվարկված է «22/4 – ժա/ժբ - 1896», Կոմիտասը նամակի մեջ կիսվում է «...իմ գրած երաժշտական բեկորները ուսուցչապետս յանձնարու եղաւ րպէլ րալու իւր ծախքով, ...»: Թեև երաժշտագետ Ռ.Աթայանը րանից հանգում է այն հետևություն, որ սույն «երաժշտական բեկորներ»ի փակ պիտի րեսենել «Առ գետրս քարելացվոց» սաղմոսը, այդ միտքը մեզ այնքան էլ համոզիչ չի քվում, քանի որ այդ սրեղծագործությունը համապարասիանում է ոչ թե 1896-ի ուսման շեմին գրելով Կոմիտասին, այլ 1899-ի երաժշտական գիտելիքների և մակարդակի հասածին: Բայց ահավասիկ այս երգերը, որտեղ Կոմիտասի առաջ դրված էր միայն բազմաշայնության խնդիր (քանի որ մայր եղանակը գոյություն ուներ), ամենայն հավանականությամբ կարող են լինել նշված այդ «երաժշտական բեկորներ»ը: Գրառման մեջ նշված սեպտեմբեր ամիսն էլ կարող է և գրառման սկիզբը համարվել (1896) և մշակման վերջը (1897): Բայց քանի որ ակնհայտ է այդ նյութի վերջնական րարբերակ լինելը, խոսքը այսրեղ կարող է միայն 1897-ի մասին լինել:

Այս նյութում րեղ են գրել րասնմեկ հարաված Պարարագից\*, ա) Ehre dir - «Փառք քեզ Տեր» (Հավարամքին նախորդող փառաբանություն);

բ) Heilig, heilig - «Սուրբ, սուրբ, սուրբ, րէր զօրութեանց» (հարված պարարագից); գ) Amen - «Ամէն»; դ) Im Welten all - «Յամենայնի» (հարված պարարագից); ե) O, entzuckender - «Ով սրանչեղի և րեսիլ սհավոր» (Տեր յերկնից Մեծի Ուրբաթի); զ) Jerusalem - «Գովեա Երուսաղեմ» (Ճաշու շարական Յարութեան և Յիևանց); է) Hallelujah - «Ծափս հարեք ամենայն Հեթանոսք» (Ալեղուք Յարութեան Քրիստոսի); յ) Heut erstand - «Այսօր յարեաւ ի մեռելոց» (շարական Թափօրի Յարութեան); լ) Heiligkeit - «Սրբություն Սրբոց» (սրբասացութիև Մարտիրոսաց); ժ) O, prachtvolles - «Ով զարմանալի» (րաղ Ջրօրհնեսաց); ժա) Vater unser - «Հայր մեր» (Տէրուևական աղոթք): Այս հարվածներից ուրք գրված է երկսեք երգչախմբի, իսկ երկու երգ երկսեք երգչախմբի և մեներգչների քառյակի համար: Միայն «Heiligkeit» սրբասացութիև «Սրբություն Սրբոց»ը այս րեսակետից բավական րարբերվում է քոլորից, այս երգը գրված է ընդհանուր 16 շայնի համար, ներառյալ րեկոր և սուրանո մեներգչները:

Սույն հոդվածով փորձեցիք երաժշտական աշխարհին հակիրճ րեղեկացնել Կոմիտասի գերմանական ոճով գրված երգերի մասին կարարված մեր աշխարանքների արդյունքները, որի հետևանքով ավելի քան կրկնապարկվում է մինչ օրս հայրնի եղած քանակը: Այսպիսով, Կոմիտասագիրություն մեջ փասարացի է դառնում, որ Կոմիտասի գերմաներեն սրեղծագործությունները կազմված են ոչ թե 18, այլ ընդհանուր քվով 38 գործից, ներառյալ քերավարները: Վերոհիշյալ քանակի մեջ չեն մրկում նրա բազմաշայնած ու գերմաներենի քարզմանած հայկական հոգևոր երգերը: Խոնարիվելով մինչ այժմ կոմիտասագիրության մեջ հսկայական աշխարանք կարարած մեր անվանի երաժշտագետների վասարակի առաջ, հույս ունենք, որ առաջիկայում կհայրնվեն նոր նյութեր ու ձեռագրեր, որի շնորհիվ կը հարարանա այս ցանկը և մենք շարավելի լիարժեք րեղեկություններ կունենանք Կոմիտասի գործունէության և սրեղծագործական ուղու մասին:

**Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

1. Աթայան Ռ.Ա., Կոմիտասի ուսումնարությունը Բեռլինում, //Պատմա-բանասիրական հանդես, 1988, N 2, էջ 48-59:
2. Աթայան Ռ.Ա., Komitas, An den Wessern zu Babel, //Սովետական արվեստ, 1966, N 12, էջ 35-39:
3. Թահմիզյան Ն., Կոմիտասի «Պեղինեան» անտիպ պատարագի և հոգևոր այլ երգերի ներդաշնակեալ տաս կտորներով, //Հանդես ամսօրեա, 1997, էջ 89-98:
4. Լօքմագոյան Տ., Կոմիտասի երաժշտական ժառանգությունից, //«Էջմիածին», 2002, Գ, Ե., էջ 63-71; Լօքմագոյան Տ., Կոմիտաս Վարդապետի թուրքերեն ստեղծագործությունները, //«Էջմիածին», 2004, Գ, էջ 68-76:



Տիրան Լօքմագոյան, երգիչ, լրագրող, 1991թ.  
Tiran Loqmazyozyan, singer, editor, 1991.

լուսանկ. Վ.Թովմասյանի  
photo by V.Tovmasyan

երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 4(35)2009

\* Ն. Թահմիզյանը իր վերոհիշյալ հոդվածում խոսում է տասը երգի մասին և «Amen»-ը թողնում է այդ հաշվից դուրս, չնայած որ նա իրավացի է այդ մտաեցմամբ, քանի որ դա «հոգևոր երգ» չէ, բայց այնուամենայնիվ մի ինքնուրույն «կտոր» է, որը այդ երգերից ոչ մեկի մասը չի կազմում, այդ պատճառով էլ մենք մտքել ենք հաշվի մեջ: